0001, Երևան, Հայաստան
Նալբանդյան 106/1, Սայաթ-Նովա
բիզնես կենտրոն
Հեռախոս՝ +374 44 20 20 48
Էլ. հասցե՝ info@mediafactory.am
Կայք՝ mediafactory.am

MEDIA FACTORY
HETQ

0001, Yerevan,Armenia
106/1 Nalbandyan Sayat-Nova
Business Center
Phone: +374 44 20 20 48
E-mail: info@mediafactory.am
Website: mediafactory.am

ք. Երևան
նոյեմբերի 10, 2023 թ.
Լոռու մարզպետ
Արամ Խաչատրյանին
Հետք Մեդիա Գործարանի ուսանող-լրագրող
Տաթևիկ Աջամողլյանից
էլ. փոստի հասցե՝ tatevrubeni101@gmail.com
հեռ.՝ +374 77 17 33 47

Հարցում

Հետք Մեդիա Գործարանը հոդված է պատրաստում Լոռու մարզի կրթական հաստատությունների շենք-շինությունների անվտանգային և սանիտարահիգիենիկ վիճակի մասին: Խնդրում եմ տեղեկություն տրամադրել հետևյալի վերաբերյալ՝

1. Լոռու մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական, հիմնական և ավագ դպրոցների շենքերից քանի՞սն են 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կարգի վթարային (խնդրում եմ առանձին բացվածքով տրամադրել դպրոցների հասցեները՝ վթարային վիճակի մասին տվյալի նշումով, օրինակ՝ դպրոցի հասցե, վթարայնության աստիճան):
2. Վթարային գնահատված դպրոցներից քանի՞սն են ներառված կառուցման, վերակառուցման, նորոգման և հիմնանորոգման ծրագրերում (մանրամասն նկարագրեք ծրագրերը, տվյալներ տրամադրեք ծրագիրն իրականացնող կառույցի մասին): Խնդրում եմ տեղեկություն տրամադրել իրականացվող և իրականացվելիք ծրագրերի ժամանակացույցի մասին, թե որ դպրոցը ե՞րբ է նախատեսվում վերանորոգել, վերակառուցել, հիմնանորոգել:
3. Վթարային դպրոցներից քանի՞սն են հրատապ, անհետաձգելի ամրացման ենթակա (խնդրում եմ նշել հասցեները):
4. Մարզպետարանի աշխատակազմի ենթակայությամբ գործող քանի՞ դպրոց կա, որ չունի կոմունալ տարրական հարմարություններ (խնդրում եմ տրամադրել դպրոցների հասցեները):

Հարգանքով,
Տաթևիկ Աջամողլյան